

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

աջակցությամբ՝

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
Երևանի պետական համալսարանի
«Նորավանք» ԳԿՀ-ի

**«Հայ ինքնության որակների պահպանումը
խառնամուսնություններում»**

*Գիտագործնական համաժողով
Ջեկուցումների ժողովածու*

**“Preservation of the Features of Armenian Identity in Mixed
Marriages”**

Workshop
Collection of papers

**“Сохранение качеств армянской идентичности
в смешанных браках”**

Научно-практическая конференция
Сборник докладов

25-26 ապրիլ 2010
Երևան
«Բավիղ» ՍՊԸ

ՀՏԴ 374.6 : 17: 06
ԳՄԴ 67.99 (2) 4+87.715
Հ 249

Հ 249

*Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում:
Գիտագործնական համաժողով:
Զեկուցումների ժյվ.-Եր.:«Բավիդ» ՍՊԸ, 2010.- 188 էջ:*

*Ժողովածուն ընդգրկում է 2010 թվականի ապրիլի 25-26-ը Երևանում
անցկացված «Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուս-
նություններում» գիտագործնական համաժողովի զեկուցումները:*

ՀՏԴ 374.6 : 17: 06
ԳՄԴ 67.99 (2) 4+87.715

ISBN 978-9939-818-16-0

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏԻՉՅԱՆ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետ

Ազգային ինքնության քաղաքականությունը բեռլինահայ համայնքում

Էթնոազգային սահմանները կառուցակցվում են սոցիալապես և կախված են կոնկրետ հանգամանքներից, այսինքն դրանք սկզբունքորեն փոփոխելի են: Ընդ որում ազգի սոցիալական համակարգը կարող է չհամընկնել տարածականորեն սահմանազատված ազգային հասարակության հետ: Ազգային մշակույթի ապատարածակա-նացման և համաշխարհային միգրացիոն հոսքերի ձևավորման արդի պայմաններում տարածական ազգայնականությանը գալիս է փոխարինելու էթնոմշակութային ազգայնականությունը: Օգտվելով տրանսպորտի և կապի ժամանակակից միջոցներից՝ միգրանտների մոբիլ խմբերը տեղաշարժում են էթնոմշակութային համակարգի սոցիալական սահմանները ազգային հասարակություններից այն կողմ: Մշակութային նույնացման և էթնոազգային լոյալության հիման վրա անընդհատ առաջանում է Սփյուռք:

Հայկական Սփյուռքը գործառնում է գլոբալ էթնոազգայնակա-նության հիման վրա՝ հանդիսանալով ազգային ինքնակազմակերպ-ման նոր ձև: Սիմվոլիկ մշակութային սահմաններում մշտական ինքնադիտարկման և տարբերակման հաղորդակցման պրակտիկա-ների միջոցով տեղի է ունենում հայերի ինքնանույնացումը որպես համաշխարհային ազգ: Դրանով էլ ազգային հանրույթը կայունաց-նում է իրեն: Այդ կայունությունն ապահովվում է ինքնության քաղա-քականության համապատասխան մշակութային պրակտիկայով, որն իրականացվում է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Սփյուռքում:

Ինքնության քաղաքականությունը համապատասխան ինք-նություն ձևավորելուն, պահպանելուն և զարգացնելուն միտված նպատակադիր գործողությունների և միջոցառումների ամբողջու-

թյուն է: Ինքնության քաղաքականության մշակութային ինտեգրման պրակտիկան հինգ տարբեր մակարդակներում է իրականացվում¹.

1. ազգային պատմության վերաբերյալ հրապարակային դիսկուրսի ծավալում ՋԼՄ-ներում,

2. հիշողության վայրերի և հուշարձանների միջոցով միջնորդավորված ինքնաներկայացման և սիմվոլականացման տարածական կոնցեպտի մշակում,

3. «հիշողության էսթետիկայի» նշանների և նշանակությունների համար տարվող սիմվոլիկ պայքար,

4. պատմական նշանավոր թվերի, տոների, մեղիալ հիշարժան պատկերների հետ իրականացվող հիշողության աշխատանքի պրակտիկաների ծիսական և էսթետիկական կանոնի ձևավորում,

5. կենսագրական բնույթի պատմությունների և հիշողությունների, լուսանկարների և ազգային պատմությանը վերաբերող գրքերի փաթեթի ձևավորում:

Հենց այդ հինգ մակարդակներում իրականացվող պրակտիկաներն են մեր հետազոտության խնդրո առարկան:

Հետազոտությունը կատարել ենք Պերմանիայի մայրաքաղաք Բեռլինում, որտեղ 1923թ. հիմնադրվել է Պերմանիայի ամենահին հայկական համայնքային կազմակերպությունը²: Այդ համայնքային կազմակերպությունը վերաբացվել է 1966թ. շնորհիվ Թուրքիայից եկած հայ «գաստարբայտերների» և Իրանահայ ուսանողների ջանքերի: 1975-1991թթ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի և Խորհրդային Միության փլուզման արդյունքում Բեռլինում հայտնվեցին նաև շատ լիբանանահայ և խորհրդահայ փախստականներ: Բեռլինահայ համայնքը մեծացավ և 1999թ. կիսվեց երկու

¹ W. Kaschuba, *Geschichtspolitik und Identitätspolitik. Nationale und ethnische Diskurse im Kulturvergleich*. S. 19-42 In: B.Binder, W.Kaschuba, P. Niedermüller (Hg.): *Inszenierung des Nationalen: Geschichte, Kultur und die Politik der Identitäten am Ende des 20. Jahrhunderts*. Köln u.a., 2001, էջ 24:

² Y. Ficiyan, *Armenische Kolonie zu Berlin e.V./ Armenische Apostolische Kirchengemeinde stellt sich vor*, in: *Vorträge zur Ausstellung §70 Jahre Armenische Gemeinde in Berlin*. Berlin, 1993, էջ 1-11:

համայնքային կազմակերպությունների՝ «Բեռլինի հայ համայնք» և «Բեռլինի հայ եկեղեցու համայնք» անվանումներով: Երկու կազմակերպություններն էլ հոգ են տանում բեռլինաբնակ հայերի ինքնության պահպանման մասին՝ հնարավորություն ստեղծելով, որ հայերը կապեր ունենան միմյանց հետ և չկտրվեն պատմական հայրենիքից: Խնդիրը շատ կարևոր է, քանի որ բեռլինահայ համայնքը և՛ անդամների ծննդավայր երկրների, և՛ իր սոցիալական և մասնագիտական կառուցվածքի տեսակետից բավականին հետերոգեն է: Բեռլինաբնակ հայերի ծննդավայր երկիրը, Գերմանիա ներգաղթելու ժամկետը և պատճառները, մարդկանց տարիքը և այլ գործոններ առաջացնում են էական տարբերություններ հայի ինքնության բաղադրատարրերի (օր.՝ մայրենի լեզվի տիրապետում կամ կրոնական ավանդույթների պահպանում) առումով: Պետք է նկատի ունենալ նաև, որ Բեռլինում չկա հայկական թաղամաս, հայերը ոչ հայկական միջավայրում են բնակվում և աշխատում, քիչ չեն խառնամուսնությունները:

Պետք է նկատել, որ բեռլինահայերը սովորաբար շաբաթական երկու անգամ հնարավորություն ունեն հավաքվելու և միմյանց հետ շփվելու Բեռլինի Շարլոտենբուրգ շրջանում գտնվող «Հայ տուն» կոչվող համայնքային կազմակերպությունների նստավայրերում: Համատեղ ժամանցի կազմակերպումը ընդգրկում է միջոցառումների լայն շրջանակ՝ հայկական հեռուստաընկերությունների հաղորդումների համատեղ դիտարկումից մինչև հայոց կրոնական տոների հանդիսավոր նշում: Համայնքներում կազմակերպվում են զանազան մշակութային միջոցառումներ, մայրենի լեզվի դասավանդում երեխաների համար, գործում են հայալեզու գրադարաններ և տարբեր խմբակներ:

Սակայն, երբ մենք բեռլինահայության համատեքստում օգտագործում ենք «հայի ինքնություն» հասկացությունը, պետք է նկատի ունենանք, որ այդ ինքնությունը կոնտինգենտ է, և պարտադիր թվացող որոշ բաղադրատարրեր կարող են ընդհանրապես չլինել,

իսկ մյուսները՝ ավելի մեծ դերակատարություն ունենալ (օր.՝ Թուրքիայից սերված հայերի զգալի մասը չի խոսում հայերեն, բայց շատ նվիրված է մեր կրոնին): Այսինքն՝ ինքնության բնութագրիչները յուրահատուկ կայուն ձև են կազմում, իսկ կոնկրետ բովանդակությունը կոնկրետ մարդկանց մոտ շատ տարբեր է: Բեռլինահայերի հետ անցկացված սոցիոլոգիական հարցումները թույլ են տալիս եզրակացնել, որ հայի ինքնության կայունության առանցքը պատկանելիության զգացումն է մեր մշտապես վերապատմվող «ողբերգական պատմությանը»¹: Հայի ինքնությունը ծիսականացման² պատմական պրոցեսի միջոցով կառուցակցվող խորհրդանիշ է, որն իր մշտապես փոփոխվող բովանդակության համեմատ հարաբերականորեն կայուն է մնում: Ազգային հանրույթը զարգանում է խորհրդանշական մշակութային սահմաններում:

Վերոհիշյալ ինքնության քաղաքականության մշակութային ինտեգրման պրակտիկայի բոլոր հինգ մակարդակներում էլ բեռլինահայ համայնքները լուրջ աշխատանք են տանում:

Առաջին՝ հայոց պատմության, լեզվի և արվեստի վերաբերյալ գերմանալեզու բազմապիսի հրապարակումների միջոցով խնդիր է լուծվում հնարավորինս շատ գերմանացիների ծանոթացնել հայկական մշակույթի ձեռքբերումներին, դրանով նպաստելով փոխըմբռմանը, հայերի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը: Այդ նպատակին հասնելու համար օգտագործվում են ժամանակակից էլեկտրոնային լրատվամիջոցների հնարավորությունները (օր.՝ բեռլինյան «Մուլտի-Կուլտի» ռադիոն):

Երկրորդ՝ Բեռլինի հայկական համայնքները հոգ են տանում հայոց պատմության հետ առնչվող հուշարձանների և հիշողության վայրերի պահպանման և գործառնման մասին: Գերմանական

¹ A. Mkrtichyan, Ethnonationalität und ethnokulturelle Konflikte bei der Bildung von Diasporagemeinden. S.69-85 In: Berliner Blätter : Ethnographische und ethnologische Beiträge, 2004, Heft 33, էջ 74:

² R. Feistel, Ritualisation und die Selbstorganisation der Information. S. 83-89 In: Niedersen U., Pohlmann L. (Hg.): Selbstorganisation; Jahrbuch für Komplexität in den Natur-, sozial- und Geisteswissenschaften. Bd. 1, Berlin, 1990, էջ 84:

մամուլում հաճախ հիշատակվում է Հարդենբերգերշտրասե 17 բեռլինյան խորհրդանշական վայրը, որտեղ Սողոմոն Թեխերյանը սպանել է ցեղասպան թուրք գործիչ Թալեաթ պաշային: Բեռլինահայերի ջանքերով կազմակերպվում են հայանպաստ գործունեությամբ աչքի ընկած հայտնի գերմանացիների մեծարման միջոցառումներ (օր.՝ Կայգերդամ 16 հասցեում գտնվող շենքի դիմաց դրվել է Արմին Վեգներին նվիրված հուշատախտակ և Հայ Տանը կազմակերպվել հանդիսավոր ընդունելություն):

Երրորդ՝ Բեռլինի հայ համայնքում պարբերաբար տեղի են ունենում սեմինարներ՝ նվիրված հիշողության էսթետիկայի հարցերին (օր.՝ 2002թ. սեմինարների շարքի թեման էր «Անցյալի սոցիալական կառուցումը. կոլեկտիվ հիշողության ձևերը»):

Չորրորդ՝ բեռլինահայերը կանոնավոր կերպով համատեղ նշում են մեր կրոնական և պատմական տոները (օր.՝ Թարգմանչաց տոնը, Վարդանանց տոնը, Անկախության օրը և այլն): Սա «պատմության քաղաքականության» մաս է կազմում: Համատեղ տոնակատարությունների միջոցով ծիսականացվում են պատմական իրադարձություններին վերաբերվող հիշողությունները՝ դառնալով բեռլինահայերի ինքնության կարևոր բաղադրիչ:

Եվ հինգերորդ՝ հայկական համայնքները կազմակերպում են նաև միջոցառումներ, որոնց ժամանակ ներկայացվում են տարբեր, բայց հատկապես ցեղասպանության վերապրածների կենսագրական բնույթի պատմություններ, որոնք զգայական մեծ լիցք և կապվածություն առաջացնելու մեծ ուժ ունեն:

Յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին բեռլինահայությունը որոշ գերմանական կազմակերպությունների հետ միասին ցույց է կազմակերպում Թուրքիայի դեսպանատան առաջ: Ուշագրավ է, որ նման միջոցառումների մասին հաղորդում են նաև սփյուռքահայ այլ գաղութներում լույս տեսնող հայկական լրատվամիջոցները: Այսինքն այդպիսի լոկալ միջոցառումները հայության համար զլոբալ նշանակություն ունեն: Եվ դա ոչ միայն քաղաքական բնույթի միջոցառում-

ներին է վերաբերում: Հաճախ նաև հայերի կենցաղային պրակտիկաները համաշխարհային շառավիղ ունեն: Շատերը բարեկամներ ունեն թե՛ Հայաստանի Հանրապետությունում, թե՛ այլ երկրներում: Էթնոազգային սոցիալական ցանցերը ակտիվ են, հայերի միմյանց հետ կանոնավոր հաղորդակցության մեջ են: Հաղորդակցության միջոցների և տեխնոլոգիաների արդի զարգացման պայմաններում գլոբալացվում է էթնիկ ինքնությունը: Գլոբալ էթնոազգայնականությունը մոբիլիզացնում է խմբերը՝ համաշխարհային մասշտաբով մեծացնելով նրանց մրցունակությունը: Հաղորդակցական գլոբալ ցանցերի միջոցով ծեռք են բերվում անհրաժեշտ տեղեկություններ, նոր ծանոթություններ, կազմակերպվում են տնտեսական գործողություններ: Այդ ցանցերի օգնությամբ տեղի են ունենում նույնիսկ ամուսնությունների հետ կապված միջնորդություններ, ինչը թույլ է տալիս մեղմացնել խառնամուսնությունների հետ կապված հիմնախնդիրները: Այդպիսով համայնքային կյանքը գլոբալացվում է:

Քանի որ միգրացիոն պրոցեսների աննախադեպ աճի և արդի հաղորդակցության տեխնոլոգիաների որակական զարգացման արդյունքում էթնիկ խմբերի գործողությունների շառավիղը համայն աշխարհն է դառնում, մարդկության համաշխարհային համակարգի սոցիալական տարածության մեջ նոր դեմարկացիոն սահմաններ են առաջանում: Գլոբալ էթնոազգայնականությունը կոնսոլիդացնում է գլոբալ ազգային հասարակությունը և դառնում աստիճանաբար առաջնահերթ ազգաստեղծ գործոն, հարցականի տակ դնելով տարածքի, որպես այդպիսի գործոնի, նախկին նշանակությունը: Ազգերի կայացման և ինքնահաստատման պրոցեսները նոր բովանդակություն են ստանում: